

- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 416-րդ հոդվածի 2-րդ մասում «բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքերի» բառերը փոխարինել «բացառությամբ սույն հոդվածի 4-րդ և 4.1-ին մասերում նշված դեպքերի» բառերով»:

Հոդված 2. Օրենսգրքի 416-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին մասով.

«4.1. Հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության կողը սխալ տպագրելը՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի, առաջացնում է նախազգուշացում, իսկ նախազգուշացումը կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասով սահմանված խախտումը կրկին կատարելու դեպքում՝ տուգանք՝ 10000 ՀՀ դրամի չափով:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից: